

Մամուլի հաղորդագրություն

ՀԱԳ Թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում ցուցադրվեցին Ազգային գրադարանի հարուստ ֆոնդերում պահվող տարբեր երկրներում, տարբեր ժամանակաշրջաններում տպագրված այբբենարանները: Գրադարանում հյուրընկալվեց գրող, թարգմանիչ, այբբենարանների հեղինակ Վաչագան Սարգսյանը: Այբբենարանների պատմության մասին նրա փոքրիկ դասախոսությունից հետո օրվա հերոսներ դարձան գրադարանի փոքրիկ այցելուները՝ դպրոցականները: Նրանց համար եւ նրանց մասնակցությամբ կազմակերպվեցին ինտերակտիվ խաղեր, մրցույթներ, լավագույնները Վաչագան Սարգսյանի կողմից արժանանացան արժեքավոր մրցանակների:

Այբբենարանների ցուցադրության հետաքրքիր նմուշներից կարելի է առանձնացնել «**Գիրք այբուբենից**» կամ **Ոսկանյան Այբբենարանը** . Արժեքավոր այս գիրքը տպագրվել է 1675 թվականին, Մարսելի «Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի» տպարանում: Տպագրիչը Սողոմոն Լեւոնյանն է: Այբբենարանն ընդունված է անվանել նաեւ Ոսկանյան Այբբենարան, քանի որ այն հրատարակվել է Ոսկան Երեւանցու ջանքերով հիմնված տպարանում:

Վերջինիս ղեկավարած տպագրիչների խումբը Մարսել էր տեղափոխվել հայ գրատպության կարեւորագույն կենտրոններից մեկը համարվող Ամստերդամից: 1660-86 թվականներին նրանք տպագրեցին բազմաթիվ արժեքավոր, բարձրորակ գրքեր՝ այդ թվում Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը», «Արհեստ համարողության» առաջին աշխարհաբար գիրքը, առաջին տպագիր «Աստվածաշունչ»-ը, այբբենարաններ եւ այլն: Ի դեպ, ՀԱԳ Գրատպության թանգարանում է ցուցադրվում նաեւ Ոսկանյան տպարանում հրատարակված հայերեն առաջին աշխարհաբար տպագիր մաթեմատիկական գիրքը՝ «Արհեստ համարողութեան» անունով:

Ցուցադրության են ներկայացված 1930-ական թվականներից մինչեւ մեր օրերը տարբեր երկրներում հրատարակված այբբենարաններ: Շուրջ 100 գրքեր, որոնք ցուցափեղկերում դասավորված են ըստ ժամանակագրության: Փոքրիկ պտույտ կատարելով՝ ցուցասրահում այցելուն հստակ պատկերացում կարող է կազմել, թե ինչպիսի փոփոխությունների են ենթարկվել այբբենարանները 30-ական թվականներից մինչեւ մեր օրերը:

Հետաքրքիր ցուցանմուշներից կարելի է առանձնացնել «Հայկազն մանկանց» այբբենարանը (Փարիզ, 1860), «Հեգարան»-ը (Թեոդոսիա, 1865), «Այբբենարան-հեգարան»-ը (Վիեննա, 1893 թ.), Ղազարոս Աղայանի «Ուսումն մայրենի լեզվի» այբբենարան-ընթերցարանը (Թիֆլիս, 1889) և «Արեւիկ. պատկերաւոր այբբենարան»-ը (Թիֆլիս, 1909), «Նոր այբբենարան»-ը (Թիֆլիս, 1909թ.), Ավետիք Իսահակյանի համահեղինակությամբ «Դասընկեր» այբբենարանը (Երևան, 1926), Խաչատուր Աբովյանի «Նախաշավիղ»-ը (Երևան, 1940): «Այբբենարան համառոտ» (Վենետիկ, 1823)

Ուշադրության են արժանի 30-ական թվականներին Հայպետհրատի հրատարակված այբբենարանները: Ներկայացված են նաեւ անգրագիտության վերացման երեկոյան դպրոցներում կիրառվող մեծահասակների եւ դեռահասների համար նախատեսված այբբենարան-ընթերցարանները, օտարալեզու դպրոցների համար 1930-60-ական թվականներին հրատարակված այբբենարան- ընթերցարանները եւ այլն: